ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՇԵՆԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

«22» մայիսի 2020թ.

ՀՀ Լոռու
մարզպետարան
մարզպետ Ա.Ղուկասյանին

N130

Հարգելի պարոն մարզպետ

Կից Ձեզ ենք ներկայացնում Շենավան համայնքի ավագանու թիվ 26-Ա և թիվ 27-Ա որոշումները:

Առդիր՝ 8/ութ/թերթ:

Համայնքի ղեկավար՝ Ս.Մխիթարյան

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԵՆԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ
«06800851»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շենավանի համայնքապետարան, գ.Շենավան
հեռ. 077-57-07-57

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 26-Ա

22 Մայիսի 2020 թվական

## ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 22-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Շենավան համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

Հաստատել Շենավան համայնքի ավագանու 2020 թվականի մայիսի 22-ի արտահերթ նիստի օրակարգը.

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻՆ ԱՐԵՎԱՅԻՆ ԿԱՅԱՆԻ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Մովսիսյան Գագիկ | | | |
| Կարապետյան Ստյոպա | | | |
| Միրզոյան Հրայր | | | |
| Կարապետյան Պարույր | | | |

Համայնքի ղեկավար Մ.Մխիթարյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

## ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շենավանի համայնքապետարան, գ.Շենավան
հեռ. 077-57-07-57

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 27-Ա

22 մայիսի 2020 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2020ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻՆ ԱՐԵՎԱՅԻՆ ԿԱՅԱՆԻ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ և 42-րդ կետերի պահանջներով, սուբվենցիա ստանալու նպատակով ՀՀ Կառավարության 16.11.2006թվականի, թիվ 1708-Ն որոշմամբ, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Շենավան համայնքի ավագանին

որոշում է

1.Հաստատել «Շենավան համայնքում ֆոտովոլտային արևային կայանի և արտաքին լուսավորության կառուցման» ծրագրի բյուջետային ֆինանսավորման հայտը՝ համաձայն հավելվածի:

2.Համաձայնություն տալ մասնակցելու «Շենավան համայնքում ֆոտովոլտային արևային կայանի և արտաքին լուսավորության կառուցման» սուբվենցիոն ծրագրին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ս.Կարապետյան | | | |
| Հ.Միրզոյան | | | |
| Գ.Մովսիսյան | | | |
| Պ.Կարապետյան | | | |

Շենավան համայնքի ղեկավար՝ Մ.Մխիթարյան

«ՇԵՆԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ *06800851*

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Շենավան համայնքի ավագանու
մայիսի 22-ի N 27-Ա որոշման

# ՀԱՅՏ

## Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների

| | |
|---|---|
| Ծրագրի անվանումը | *Շենավան համայնքում ֆոտովոլտային արևային կայանի և արտաքին լուսավորության կառուցում* |
| Մարզ | *Լոռի* |
| Համայնքը /համայնքները | *Շենավան* |
| Համայնքի /բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից, ինչպես նաև մարզկենտրոնից | *Երևանից 110.կմ, Վանաձորից 30 կմ* |
| Համայնքի /բնակավայրի բնակչությունը | *525 մարդ* |
| Սահմանամերձ, բարձր լեռնային համայնք /բնակավայրի | *բարձր լեռնային* |
| Համայնքի բնակավայրի ենթակառուցվածքների վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն՝ հստակ նշելով՝<br><br>- ջրամատակարարման և ջրահեռացման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը և ջրամատակարարման տևողությունը,<br><br>- գազամատակարարման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը,<br><br>- ոռոգման համակարգից օգտվող բնակչության տոկոսը և համայնքում գյուղատնտեսական հողերից ոռոգվող հողատարածքների տոկոսը,<br><br>- լուսավորության համակարգի առկայությամբ փողոցների տոկոսը՝ համայնքի ընդհանուր փողոցների մեջ և նշել էներգախնայող և ԼԵԴ լուսավորություն է, թե ոչ | *Շենավան համայնքի փողոցները լուսավորված են 70 % -ով ցանցի ընդհանուր երկարությունը կազմում է մոտ 4 կմ,տեղադրված է 35 հատ լեդ էներգիախնայող լուսատուներ,որոնք սնվում են ընդհանուր համակարգից:*<br><br>*Գազամատակարարումը համայնքում ապահովված է 90%-ով:*<br><br>*Ոռոգման ցանցի համակարգը ապահովված է մասամբ մոտ 40%,ինչը հանդիսանում է ջրի մեծ կորուստների պատճառ:* |
| Ծրագրի ընդհանուր նկարագրությունը և դրա իրականացման անհրաժեշտությունը | *Համայնքի բյուջեից գիշերային լուսավորության և համայնքապետարանի կարիքների համար ծախսվում է 400.0 հազար դրամ,ինչը էական բեռ է հանդիսանում համայնքի բյուջեի վրա:Ծրագրի շրջանակներում նախատեսվում է տեղադրել 10 ԿՎՏ հզորության ֆոտովոլտային կայան,որի արտադրողականությունը ամբողջությամբ կբավարարի համայնքի ենթակայության տակ գտնվող էներգասպառող օբյեկտներին,ինչպես նաև նախատեսվում է տեղադրել 20 հատ մետաղական հենասյուն 7մ* |

| | |
|---|---|
| | բարձրությամբ՝եղ լուսավորության լուսամփոփներով,որով համայնքի լուսավորության տոկոսը էապես կբարձրանա: |
| Ծրագրի ակնկալվող արդյունքները, որոնց միջոցով պետք է հասնել ծրագրի իրականացման նպատակին | Ծրագրի իրականացման արդյունքում կնվազի համայնքի բյուջեի ծախսերը,որի արդյունքում խնայած միջոցները կտրամադրվեն համայնում դաշտամիջյան ճանապարհների և ոռոգման ջրի ցանցի բարելավմանը:Ծրագրի իրականացման արդյունքում կունենանք ավելի լուսավոր համայնք,բնակչության գիշերային կյանքը կակտիվանա,զբոսանքը կդառնա ավելի ապահով և հաճելի: |
| Ծրագրի արդյունքներին հասնելու գործողությունները և միջոցառումները | Գնումների գործընթացի կազմակերպում `15 օր ,ծրագրի արժեքը 7500,0հազ.դրամ,հաղթող ընկերության հետ պայմանգրի կնքում`15 օր:Իրականացվող գործողությունները և միջոցառումները կատարվելու է վեցամսյա ժամկետում: |
| Ծրագրի արդյունքներին հասնելու գործողությունները և միջոցառումները | 1.Նախագծահաշվային փաստաթղթերի կազմում-20օր<br><br>2.Մրցույթի կազմակերպում -20 օր:<br><br>3.Հսկողության կազմակերպում:<br><br>4.Շահագործում 01.12.2020 թվական:<br><br>5.Շինարարական աշխատանքներ 7070.0 հազար դրամ |
| Ծրագրի իրականացման արդյունքում համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների արժեքի ավելացում բացառությամբ բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի | Ծրագրով նախատեսվող ծախսերը կապիտալ բնույթի են:Արդյունքում կավելանա համայնքի կապիտալը շուրջ 7500.0 հազար դրամով,ինչը կհանդիսանա հիմնական միջոց: |
| Ծրագրի ազդեցությունը համայնքի և շահառուների վրա | -Շահառուների քանակը համայնքի բոլոր տնային տնտեսություններն են`146 ընտանիք: Արևային կայանի տարեկան արտադրած էլեկտրաէներգիան ամբողջովին կբավարարի համայնքի կարիքները, իսկ տնտեսված միջոցները կուղղորդվի համայնքի զարգացմանը:<br>- |
| Նշել ծրագրի իրականացման ընթացքում ստեղծվող ժամանակավոր և հիմնական աշխատատեղերի քանակը և դրանց նկարագրությունը | Ծրագրի իրականացման արդյունքում կարող է ստեղծվել 3 ժամանակավոր աշխատատեղ՝որը կթեթևացնի համայնքի բնակիչների 3 ընտանիքների սոցիալական խնդիրները: |
| Համայնքի նախորդ տարվա բյուջեն և բյուջեի կատարողականը | Նախորդ տարվա բյուջեն` 12794,2 հազ դրամ.<br>Ներկայացնել նախորդ տարվա բյուջեն, ծախսերը և կատարողականը` առանձնացնելով բյուջեի վարչական և ֆոնդային մասերը, իսկ բյուջեի ֆոնդային մասից ծախսերը ներկայացնել առանձին բացվածքով: |

| | Պլանը | Փաստացին | Տոկոսը |
|---|---|---|---|
| Ընդամենը՝համայնքի բյուջեի մուտքեր | 12794.2 | 12698.9 | 99.3 |
| Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտները<br>այդ թվում | 11235.2 | 11140.0 | 99.2 |
| -Վարչական բյուջեի եկամուտներ, որից | 11235.2 | 11511.0 | 99.2 |
| - Սեփական եկամուտներ | 2755.8 | 3031.6 | 110.0 |
| ֆոնդային բյուջեի մուտքեր | 2700.0 | 2329.0 | 86.3 |

<table>
<tr>
<td></td>
<td>
<table>
<tr><td>-Ֆոնդային բյուջեի եկամուտներ</td><td>1141.0</td><td>770.0</td><td>86.3</td></tr>
<tr><td>Ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդ</td><td>1559.0</td><td>1559.0</td><td>100.0</td></tr>
<tr><td>Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր, որից</td><td>12794.2</td><td>12609.5</td><td>98.5</td></tr>
<tr><td>- Վարչական բյուջեի ծախսեր</td><td>11235.2</td><td>11051.3</td><td>98.3</td></tr>
<tr><td>-Ֆոնդային բյուջեի ծախսեր</td><td>2700.0</td><td>2699.2</td><td>100.0</td></tr>
<tr><td>Համայնքի ֆոնդային բյուջեի փաստացի ծախսերը, որից</td><td>3100.0</td><td>2699.9</td><td>87.0</td></tr>
<tr><td>- ճանապարհաշինություն</td><td>100.0</td><td>99.5</td><td>99.5</td></tr>
<tr><td>- ընդ.բնույթի հանրային.ծառ</td><td>2900.0</td><td>2500.7</td><td></td></tr>
<tr><td>- գույքի օտարումից մուտքի հաշվին ծախս</td><td>-400.0</td><td></td><td></td></tr>
<tr><td>- աղբահանություն</td><td>100.0</td><td>99.0</td><td>99.0</td></tr>
<tr><td>-</td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td>-</td><td></td><td></td><td></td></tr>
</table>
</td>
</tr>
<tr>
<td>Համայնքի ընթացիկ տարվա բյուջեն</td>
<td>
14255.7 հազ.դրամ.<br>
Ներկայացնել ընթացիկ տարվա կանխատեսվող եկամուտները, պլանավորված ծախսերը՝ առանձնացնելով բյուջեի վարչական և ֆոնդային մասերը, իսկ բյուջեի ֆոնդային մասից պլանավորված ծախսերը ներկայացնել առանձին բացվածքով:
<table>
<tr><td></td><td>Պլանը</td></tr>
<tr><td>Ընդամենը՝ համայնքի բյուջեի մուտքերի պլանավորում</td><td>14255.7</td></tr>
<tr><td>Այդ թվում ընդ.համայնքի բյուջեի եկամուտներ</td><td>13795.2</td></tr>
<tr><td>- Վարչական բյուջեի եկամուտներ, որից</td><td>13795.2</td></tr>
<tr><td>- սեփական եկամուտներ</td><td>4093.2</td></tr>
<tr><td>- Ֆոնդային բյուջեի մուտքեր</td><td>2500.0</td></tr>
<tr><td>որից ֆոնդային բյուջեի եկամուտներ</td><td>2039.6</td></tr>
<tr><td>որից տարեսկզբի ազատ մնացորդ</td><td>460.4</td></tr>
<tr><td>Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր, որից</td><td>14255.7</td></tr>
<tr><td>- Վարչական բյուջեի ծախսեր</td><td>12795.2</td></tr>
<tr><td>-Ֆոնդային բյուջեի ծախսեր</td><td>2500.0</td></tr>
<tr><td>Համայնքի ֆոնդային բյուջեի պլանավորված ծախսերը, որից</td><td>3000.0</td></tr>
<tr><td>- ընդ.բնույթի հանրային.ծառ</td><td>3200.0</td></tr>
<tr><td>գույքի օտարումից մուտքեր</td><td>-700.0</td></tr>
<tr><td>-</td><td></td></tr>
<tr><td>-</td><td></td></tr>
<tr><td>-</td><td></td></tr>
</table>
</td>
</tr>
<tr>
<td>Համայնքի ընթացիկ տարվա բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի (ներառյալ ֆինանսական համահարթեցման դոտացիայի գծով կանխատեսվող մուտքերը) հաշվին նշված ծրագրի իրականացման անհնարինության հիմնավորումը (համապատասխան հաշվարկներով</td>
<td>Համայնքի 2020թ-ի ընդհանուր բյուջեն կազմում է 14205.7հազ.դրամ,որից<br>Դոտացիա՝9702.0 հազ.դրամ<br>Աշխատավարձ 8766.0 հազ.դրամ<br>Ծառայությունների և ապրանքների ձեռք բերում՝ 2286.0 հազ.դրամ<br>Նյութեր՝ 1420.0 հազ.դրամ<br>Սոցիալական օգնություն՝ 570.0 հազ.դրամ<br>ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով 2020 թվականի բյուջետային ֆինանսավորման թվով</td>
</tr>
</table>

| | |
|---|---|
| | 1 ծրագրի համար համայնքի կողմից բյուջեում նախատեսված գումար 3000.0 հազ.դրամ<br>Փողոցների լուսավորում՝ 300.0 հազ դրամ<br>Վերը նշված հաշվարկը ցույց է տալիս ,որ անհնար է իրականացնել այս ծրագիրը միայն համայնքի բյուջեի միջոցների հաշվին: |
| Ծրագրի ընդհանուր բյուջեն, այդ թվում՝<br><br>- շինարարական օբյեկտների նախագծման արժեքը 180.0 հազ.դրամ,<br><br>- նախագծանախահաշվային փաստաթղթերի պետական փորձաքննության ծառայության արժեքը՝ 70.0 հազ.դրամ,<br><br>- տեխնիկական հսկողության ծառայությունների արժեքը՝ 140.0 դրամ,<br><br>- հեղինակային հսկողության ծառայությունների արժեքը՝ 40.0 հազ. դրամ,<br><br>- գոյություն ունեցող շենք-շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ փորձաքննության ծառայության արժեքը՝ _________ դրամ,<br><br>ինչպես նաև առանձին ներկայացնել հասարակական շենքերի և բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման գույքի կառուցման/նորոգման դեպքում՝ էներգախնայողության միջոցառումների արժեքը _________ դրամ | *7500.0 հազ.դրամ (100%)*<br><br>շինարարական օբյեկտների նախագծման արժեքը 180.0 հազ.դրամ,<br><br>- նախագծանախահաշվային փաստաթղթերի պետական փորձաքննության ծառայության արժեքը՝ 70.0 հազ.դրամ,<br><br>- տեխնիկական հսկողության ծառայությունների արժեքը՝ 140.0 դրամ,<br><br>- հեղինակային հսկողության ծառայությունների արժեքը՝ 40.0 հազ. դրամ, |
| Համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը | *3000.0 դրամ (40%)* |
| Այլ ներդրողներ | |
| Ծրագրի իրականացման տևողությունը | *Սկիզբը 01.06.2020թ. Տևողությունը 6 ամիս :* |
| Ծրագրի ծախսերը | 1.Նախագծահաշվային փաստաթղթերի կազմում 180.0 հազ դրամ<br><br>2.Փորձաքննության արժեք՝ 70.0 հազ.դրամ<br><br>3.Տեխնիկական հսկողություն՝ 140.0 հազ.դրամ |

| | |
|---|---|
| | 4.Հեղինակային հսկողություն՝ 40.0 հազ.դրամ<br><br>5.Մրցույթի կազմակերպում- 20 օր:<br><br>6. Շահագործում՝01.12.2020 թ<br><br>7.Ծրագրի ընդհանուր արժեքը 7500.0 հազ. դրամ<br><br>որից՝ շինարարական ծախսեր՝7070.0 հազ.դրամ<br><br>Ծրագրի այլ ծախսեր՝ 430.0 հազ.դրամ |
| Ամսաթիվ | *22.05.2020թ.* |

Այլ տեղեկություններ ծրագրի մասին (նշել այն լրացուցիչ հանգամանքները, որոնք կարող են ցույց տալ ծրագրի կարևորությունը, ակնկալվող արդյունքների ազդեցությունը համայնքի և տարածաշրջանի զարգացման վրա, այլ հանգամանքներ, որոնք կարող են հաշվի առնվել ծրագիրը գնահատելու ընթացքում):

Համայնքի տնտեսական պատասխանատու
Հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստը

Համայնքի տնտեսական պատասխանատու՝ Մխիթար Մխիթարյան
հեռախոսհամարը՝077-57-07-57, էլեկտրոնային փոստը՝shen.gp@mail.ru

Համայնքի ղեկավար Մխիթար Մխիթարյան
(անունը, ազգանունը)

Կ. Տ.